Արևշատ

Վարչական ղեկավար՝ Հովհաննես Զաքարյան

Հեռ: 094 92 75 69

Մակերես՝ 16.6կմ2

Բնակչություն՝ 1900

Ինդեքս՝ 3009

vip.arevshat@mail.ru

Արևշատ, գյուղ Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկից՝ 10,7 կմ, իսկ Գյումրիից 23 կմ հեռավորություն ունի, գտնվում է Մանթաշ գետի ափին։ Նախնիները 1828-1830 թվականներին գաղթել են Կարս Բվիկ, Ջամուշլու գյուղերից, մասամբ էլ Սարիղամիշից և Կարինից։ Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, ծխախոտագործությամբ և ճակնդեղագործությամբ։ Գյուղում կան XIV-XV դարերի եկեղեցի (վերանորոգված 1873 թ.-ին), <<Կարմիր Ավետարան>>, <<Սոլոյենց սուրբ>> և <<Մարինեենց սուրբ>> մատուռներ։

ՀՀ Շիրակի մարզի Արևշատ գյուղը Արթիկի տարածաշրջանի գյուղերից է։ Ըստպատմական տեղեկությունների գյուղի հիմնադիրները գաղթել են Կարսի Բվիկ,Ջամշլու գյուղերից, Սարիղամիշից և Էրզրումից 1823-30 թթ.-ին։ Մինչև 1951 թվականըգյուղը կոչվել է Եգանլար, իսկ այնուհետև վերանվանվել է Արևշատ։

Գյուղը ունի միջնակարգ դպրոց, բուժ. Ամբուլատորիա, մշակույթի տուն, նախակրթարան, որոնք բոլորն էլ գործող են: 1992-ից մինչև 1994 թթ-ը գյուղում անցկացվել է սեփականաշնորհման գործընթաց: Գյուղը ունի 2126 բնակիչ, որտեղ բնակվում են բացառապես հայեր: Գյուղում կան XIV-XV դարերի եկեղեցի (վերանորոգված 1873 թ.-ին), <<Կարմիր Ավետարան>>, <<Սոլոյենց սուրբ>> և <<Մարինեենց սուրբ>> մատուռներ:

Արևշատ համայնքը գտնվում է Արագածի հյուսիս-արևմտյան լանջին, ծովի մակերևույթից 1960 մետր բարձրության վրա: Դիրքը լեռնային է, ձմեռը խստաշունչ, տևողությունը վեց ամիս: Գարունը գալիս է ուշացած, ամառը տաք է ու չորային: Հաճախակի է չորային և երաշտի տարիները: Համայնքը սահմանակից է Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Նորաշեն և Սպանդարյան գյուղերին: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ ու հողագործությամբ, մշակում են հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաներ, հիմնականում գազար և կարտոֆիլ:

Գյուղը գտնվում է մայրաքաղաքից 95 կմ, մարզկենտրոնից 35 կմ, իսկ շրջկենտրոնից 11 կմ հեռավորության վրա:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արևշատ համայնքի բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Պատմության մեջ կան փաստեր, որոնք վկայում են Արևշատի բնակչության համեստ, հարգանքով միևնույն ժամանակ ըմբոստ բնավորության մասին: Ավանդաբար պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: Խոհանոցում պահպանվել են ավանդական ճաշատեսակներ, որոնցով շարունակում են պատվել և զարմացնել հյուրերին: